ՀՀ ԱԺ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

30.03.2016թ. Ե- 907

«ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ Է.ԴՈՅԴՈՅԱՆԻՆ

Ձեր 23.02.2016թ-ի թիվ 267-ի 1 հարցմանն ի պատասխան
(ստացվել է էլ.փոստով՝ 25.03.2016թ-ին)

Հարգելի տիկին Դոյդոյան

Ղեկավարվելով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի դրույթներով՝ հայտնվում է.

1. 2016թ-ի հունվարի 1-ից մինչ մարտի 30-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ ԱԺ աշխատակազմն էլեկտրոնային փոստի միջոցով ստացել է 4 հարցում:

2. 2016թ-ի հունվարի 1-ից մինչ մարտի 30-ն ընկած ժամանակահատվածում էլեկտրոնային փոստով ստացված բոլոր հարցումների պատասխաններն ուղարկվել է էլեկտրոնային եղանակով՝ հաստատված էլեկտրոնային ստորագրությամբ:

3. Համաձայն ՀՀ կառավարության 15.10.2015թ. N 1204-ն որոշման (այսուհետ նաև՝ Որոշում) 3-րդ կետի՝ Տեղեկատվություն տնօրինողներին պաշտոնական կայքերում (առկայության դեպքում) էլեկտրոնային թվային ստորագրությամբ ուղղակիորեն հարցում գրելու կամ ստորագրված հարցումները կցելու հնարավորության ապահովման համար տրվել է վեցամսյա ժամկետ: Որոշման 4-րդ կետի համաձայն՝ Որոշումն ուժի մեջ է մտել 2016թ-ի հունվարի 1-ից, իսկ սահմանված վեցամսյա ժամկետը լրանում է 2016թ-ի հունիսին: Միաժամանակ տեղեկացնում ենք, որ ներկայումս կատարվում են աշխատանքներ Որոշման 3-րդ կետի պահանջներն իրականացնելու ուղղությամբ, դրանք կավարտվեն Որոշմամբ սահմանված ժամկետում:

4. Որոշումն ուժի մեջ մտնելուց հետո դեռևս չկան հավաքագված այնպիսի կրկնվող հարցեր, որոնք կրում են պարբերական բնույթ (տրվել են հինգ և ավելի անգամ):

Հարգանքով՝

ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ /ստորագրված է էլեկտրոնային/ ԱՐՍԵՆ ԲԱԲԱՅԱՆ